



ԲԱԺԱՆՈՐԳ ԱԳՐՈՒԹԻՒՆ

ուղարկոյ համար
Տարեկան 10 Ֆր.
Վեցամսեայ 5 »

Արտասահմանի համար Տարեկան 12 »
Վեցամսեայ 6 »

Անտրիկայի համար
Տարեկան 2.50 ռըբ.
Վեցամսեայ 1.25 »

ԿԱՆԻՒԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Իսկուցանի տղոյ առաջին
երեսին համար 40 սակոյիս
է. իսկ վերջին երեսին համար
20 սակոյիս է. երեսին
սակոյի սակոյիսերու համար
20 0/0 զեղջ կըլլայ:

ՇԱԲԱԹ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱԲՈՒԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)

Իրոպիւնիս ևս չեն տուիր

(ԿԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

(ԿԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ՊԱՏԵՐԱԶՍԸ

Լահէի Զինաթափութեան Վեհաժողովէն անմիջապէս ետքը պատերազմ բառը ամէնուն զարմանք ու ծիծաղ կը պատճառէ: Զարմանք, վասն զի դեռ երէկ Լահէի մէջ կանաչապատ սեղանին շուրջը բոլորուած գիւանդատներ և կառավարական ներկայացուցիչներ կը խորհէին միանգամ ընդ միշտ վերցնել մէջտեղէն պատերազմը, մարդկութեան էն մեծ աղէտը, և շնչել ինտուորականութիւնը, որ մարդկութեան բարոյական է եղած, և ազգերու բարոյական, մտաւորական ու տնտեսական յառաջադիմութեան մեծ մասամբ խափանարարը: Կը ծիծաղինք, վասն զի երէկի նուիրական որսչումին ոտնակոխ կընեն այսօր նոյն մարդիկը, և կսկսինք լսել վերստին մահաձիթ արմ—արմներու ահեղագոյ զոռումները:

Պատերազմը հրապարակաւ հրաշակողը չէ արիւնիկակ և վայրենաբարոյ թիւրքիս, ուր ամէն օր սեղի կուենան լուիկ մնչիկ արեւուն ու լուսնին լոյսով շարդու կոտորածներ, հապա լուսաւորեալ, քաղաքակիրթ Անգլիան, որ բարձրաձայն կը հոչակէ թէ՛ իրաւունքներ փրկելու սուրբ գործին համար ստիպուած է արիւն վոթել:

Ալպիոնի խաժակն որդիներուն աւանդական բանաձեն է ստիկա, զոր կարտասանեն բարլամէնդի մէջ իր պաշտօնական մարդիկը ամենայն պաղարիւնութեամբ, երբ նոր երկիր մը կուլ տալու «բարի» մ. ազրութիւնն ունին:

Ի՞նչ է այս կուրին սկզբնապատճառը, համառօտակի բացատրենք: 1,600 ին Հոլանտացիները հիմնեցին Բարեյուսոյ կարեւոր և հարուստ գաղթականութիւնը. սակայն 1806 ին Անգլիացիները գրաւեցին այս երկիրը և ստիպեցին տեղացի Պօէրները գաղթելու դէպի հիւսիս: Պօէրներն ալ, խաշնարած ժողովուրդ, գացին Հարաւային լայնածաւալ

Ափրիկէի մէկ մասին վրայ, որ թրանսվալ կը կոչուի, հանդարտիկ ու անխառնուակ ապրելու:

Ալպիոնի զաւակները, անյազ ընչաքաղցութենէ մղուած, ուղեւորեցան այդ կողմերը, նշմարելով սր՝ այդ խոսքան կարծուած հողերուն տակ ոսկիի երակներ կան ծածկուած, տակաւ ու անզգալաբար սովալուկ գայլերու նման սկսան գրոհ տալ այդ սեղերն և զանոնք իրապնելու մտադրութեամբ Պօէր միամիտ հողատէրերու ձեռքէն շնչին գուժարներով ծախու առին ոսկի թագոյց «անապատները» ընդհուպ կազմելով հոն հոժ գաղթականութիւն մը: Այս նորեկ գաղթականները, իրենց ոսկիի հանքերէն չի բաւականալով, ուղեցին Պօէրներուն ձեռքէն խլելու ջանալ նաեւ կառավարութիւնը: Նախ պահանջեցին խորհրդատուի ձայն, երկրորդ քուէարկութեան ուրիշ իրաւունքներ: Պօէր կառավարութիւնը, տեսնելով ապագայ մտաւորաւ կորստեան մեծ և սպառնացող վտանգը, ականջախցիկ գտնուեցաւ այս խնդրանքներուն, որոնք անխառն էին բոլորովին. վասն զի այս գաղթական Անգլիացիներն աւանց ընդունելու Պօէր կառավարութեան հպատակութիւնը, կուղէին աէր ըլլալ այն տեսակ իրաւունքներու, որոնք միմիայն երկրացիին յատուկ են: Երբ տեսան թէ՛ իրենց խնդրանքները, թէ՛ անխառնալի կը մնան, դիմեցին իրենց կառավարութեան, որ իր ազգեցութիւնն ի գործ դնէ այս խնդրոյն միանգամ ընդմիշտ վերջ տալու համար:

Ձէմպրլէն, որ ինչ ինչ նկատումներով, վաղուց կապասէր այս գիմումին, իր հետ ունենալով լրագրութիւնը, հասարակած կարծիքին վարիչը, հոչակեց պատերազմը, բոլոր պատասխանատուութիւնը թողալով Պօէր կառավարութեան վրայ: Թէպէտ և ազգային խորհրդարանին մէջ զբաշտուեցան ազատամիտ, արդարասէր անձնաւորութիւններ, կլաստթոնի յաջորդիկներ, սակայն ասոնք ալ, աւանց հարցապնդու-

մի, մէկ քանի չորուցամաք խօսքերով, դահացան մատնանիչ ընել կառավարութեան Պօէրներուն դէմ մղած անարդար և անհամեմատ կռիւր:

Ահա պատերազմին սկզբնապատճառը: Պօէրները, յաղթող կամ պարտեալ հանդիսանան, ունին իրենց կողմը ամբողջ մարդկութեան արդարասէր և խղճամիտ դասին համակրանքը: Միւս մեծ պետութիւնները, ոմանք ապագայ վախէն, ոմանք ալ Անգլիական զօրութիւնը ջլատուած տեսնելու տենչանքէն, ձեռքերին խաշածեւած, անտարբեր ու անկարեկիր հանդիսատես կըլլան արեան նախճիրներուն ափ մը ժողովրդեան, որ իր երկրին մէջ իր արդար իրաւունքները պաշտպանելու համար զէնքի կը դիմէ:

Տեսնենք, թրանսվալ կա՞մ բոլորովին Անգլիայէն կուլ պիտի տրուի և կա՞մ թերեւս իր պատճառով Հարաւային Ափրիկէի համար անոր գերեզման մը պիտի պատրաստէ:

ԱԻՑ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. ՊՈԼԻՍ, 27 Հոկտ.

Ամսոյ 8 ին Բ. Դուռը արեւելեան ամէն ձեւերով կայսերական շնաշխարհի իրատէն հաղորդեց հայոց Պատրիարքարանի: Արթին փաշայի հաղորդած պաշտօնական բնաւորութիւն չէր կրեր. այլ կուրտուակ մըն էր Պալատի և հայոց Պատրիարքի միջեւ:

Անցեալ շաբաթ օրուան թերթերը պաշտօնապէս աւետեցին Պատրիարքի կիրակի օրը եկեղեցի իջնալը և քաղաք ի սօսիլը:

Կիրակի Օրմանեան Մայր եկեղեցին էր պատերը զղրոցցին, մոմերն ու ջահերը շարժեցան... ահեղագոյ ու որոտնորոտ է Օրմանեանի ձայնը... մանաւանդ երբ կուղէ լսողներուն վրայ ազգել: Քարոզ մը սկսեց, մեծ պատէն ալ երկայն. ժողովրդին իր և Արթինի յաղթու-

թեան արդիւնք իրատէն աւետեց: Քարոզի բովանդակութեան հետ կրնաք ծանօթանալ այստեղի թերթերէն. չարժեր երկար կանգ առնել անոր վրայ: Կը յիշեմ միայն քանի մը յայտուկ կէտեր, որ սեղական թերթերը բաց էին թողած. կամ թէ գրաքննիչը անոնց ստիպած էր լուի... Այո, ասանկ նշանաւոր կէտեր կային Օրմանեանի քարոզին մէջ: Չեմ գիտէր Պօղոս առաքեալէն, թէ ուրիշ բնաբան մը վերցուց, որի միտքը հետեւեալն էր. եթէ սխալեցայ, ներեցէ՛ք ինձի, զի միամտօրէն սխալեցայ:

Ու ասիկայ քաջքնեց, ձգեց-ձգձըգեց, ինչպէս կըսեն Ռուսահայերը և դարձուց իր ու իր պաշտօնավորութեան վրայ: Մեծ պաշտօններու վրայ եղող անձերն ալ մարդեր են, կրնան սխալիլ, ըսաւ. եթէ ես ալ պակասութիւններ ունեցած եմ մարդկային բնութեան թերութենէն է. անկեղծօրէն է. չը գիտնալով է... եւ այլն:

Քիթիս տակէն խնդացի, մարդը սխալական է: Բայց Օրմանեան լուի մարդ մը չէ, այլ մարդ էակին հետ միասին նիզուրի էակ մըն ալ կայ հետը: Ու այն ասանկ ինչորէր լուծելը խիստ կը ծանրանայ: Որն է մարդ Օրմանեանի ըրած անկեղծ սխալը և ո՞րը նիզուրի Օրմանեանի կաւաւ ըրած ոճրագործ սխալը: Երանի թէ Օրմանեան անկեղծ ըլլար, և ոչ իր փոռասիբութեանը ծառայող գործիք մը տաճիկ կառավարութեան ձեռքը: Ու ասանկները դեռ կուզեն իրենց ըրածները անկեղծութեան քողով զիմակաւորել:

Հաւատա՞մ որ Օրմանեան անկեղծօրէն կը կարծէ թէ ներկայ արհամարհելի թուղթին կտորը—իրատէն ոեւէ բարիք մը պիտի բերէ շայուն համար...:

Չեմ կրնար հաւատալ. մարդն այդքան ալ անմիտ, այդքան ալ ապուշ չի կրնար ըլլալ:

Սաբուիլ մէկ, տասը, հարիւր անգամ կը հասկնամ, իսկ անվերջ, յաւիտեանս խալուել չեն հասկնար...:

Երկրորդ կէտ մըն ալ կայ Օրմանեանի քարոզին մէջ, սաստանայական կէտ մը... յաճախ, ըսաւ մտաւորապէս Օրմանեան, բարձրէն սրուած լաւ ու բարի հրամանները ստորին պաշտօնեաներէն արգելներու կը հանդիպին, ու չեն գործադրուիր...:

Ասոր միտքն—Վիհապետիսիւս և Պալատը սրտանց բարիք ընել կուզեն հայերուն, բայց Շէֆիք պէյեր և ատոնց նմանները արգելը կըլլան... Ասիկա պարզ գրգռում էր հայերը ընդդէմ իր անձնական թշնամիներուն. մանաւանդ Շէֆիքի: Ու ա-

սանկ միտք մը յայտնող Օրմանեան կուզէ հաւատացնել որ ինքը սխալուած է եղեր անկեղծօրէն :

Երբորդ կէտ մըն ալ զլորեց Օրմանեան իր յարողին մէջ, որ սեղական թերթերը լոռի թեմամբ անցուցին :

Այդ կէտին միտքն ալ հետեւեալն էր . ես նորէն պաշտօնս կատանձնեմ, բայց եթէ ներկայ իրատէին խոստացածները չիրականացան, նորէն պատրաստ եմ հրաժարելու : Չեմ գիտեր թէ դոնէ երեք հոգի լսողներէն հաւատացին Օրմանեանին . միայն իմ մտքն անցաւ որ այս իրատէն ալ պիտի երթայ միւս թուղթերուն քով քննաւոր : Օրմանեան նորէն պիտի գրաւոր հրաժարական սայ . այս անգամ խիստ զօրեղ սպառնալիքներու ու գործնական քայլերու բռնութեան տակ : Եւրքը այդ պատկերը աւելի լայնացաւ երեւակայութեան մէջ . Արթին իսկոյն սկսաւ միջամտել, անոր դերը միշտ միջնորդութիւն է . . . Պաշտօնը նոր թուղթ մը պիտի բաց թողնէ . նորէն քարոզ . նորէն հրաժարականը ես կտոնէ եւայլն :

Այս պատկերը զլսուս մէջը կը պատէր, երբ յանկարծ խոչոր հարցական մը ցցուեցաւ աչքին առաջ . «Իսկ Յակոբի՞ կը, իսկ պազ ու սուր երկաթը» . . .

Աչքերնիդ լոյս . Անատուրի մէջ բարենորոգումներ մտցնելու համար նշարակուած եւ այդ բարենորոգումներն չորս տարի իրարու ետեւէ արեւմտի իրականացուցած՝ արտակարգ քօմիսարը, ամէն հայու ծանօթ ջարդերու հեղինակ հոշակաւոր Շաքիր գազանը սատկեցաւ ամսոյս 8ին . Սինոպի մէջ . . .

Տառսը միւսներուն . . . կարգացող թուղթ ամէն ըսէ . . . մեռաւ եւ Համիտի հօրեղբայրը, Շէֆքէթ էֆէնարին, գահը ժանոնանգիլու իրաւունք ունեցողներէն մին . . . երեւի ջարդը ընկեր է մէջերնին : Չեմ գիտեր թէ երբ էն գազանի մահուան լուրը հաղորդուե՞ր բազը պիտի ունենամ :

Շարժումի ընթացողներուն յայտնի է որ կրէտէն, Պուլկարիայէն եւ այլ տեղերէ մահմետականները դէ-

պի թուրքիա կը գաղթեն կը լեցունին հոս, «ուր դէն», անդ եւ ժողովին ազուաբն» . . .

Ամբողջ Տաճկաստան մեծկակ լէշ մըն է ու ամէն գիշակիր գազան անոր վրայ կը վազէ :

Արդ տխուր լուր մը պիտի հաղորդեմ . այդ գաղթած 300 տուն մահմետականներու համար Ատանայի վիլայէթին մէջ, կայսերական ծախքով տուներ, մզկիթներ եւայլն շինուած են . հողեր են բաժնուած, որ հոն բնակութիւն հաստատեն : Կառավարութեան ազուէսային քաղաքականութիւնը խիստ պարզ է :

ԲԱԺ

Փ. ՊՈԼԻՍ, 15 Հոկտ.

«Իրաւունք»ի 77րդ թուին մէջ տեղէն թղթակցութիւն մը կար, ուր Արամ Արամեանի հոգեհանգստեան վրայ խօսելով, յօդուածագիրը մէկ քանի փաղաքշական բառերէն ետքը, իր փորի ցաւը շուտով դուրս կուտար անիմաստ «ինչո՞ւ» մը դնելով այս «մասնաւորութեան» հոգեհանգստեան վրայ :

Յօդուածագիրը կը յանդիմանէ քաղաքիս Դաշնակցականները ուրոնք, իբր թէ կաշխատին հզեր կուսակցական ոգին մտցնել նոյնիսկ նահատակներու յիշատակին մէջ . . . «Ինչո՞ւ Չաքրեանի համար ալ չըլլար» կը հարցնէ պարոնը :

Մենք վաղուց ծանօթացած ենք այդ կարգի յօդուածագիրներուն նենդ չարամտութեանց, ուստի շատ չենք զարմանար երբ ատանկ թղթակցութիւն մը կարգանք :

Իայց կը փափազինք ատոնց ուշադրութիւնը հրաւիրել նախապէս ցրուած յայտարարութեանց վրայ, ուր գրուած էր .

որ լսելով ուրիշներէ իրենց պապերուն հարստութիւնն ու ազգակառնութեանը գովեստը, ուրախութենէ կը թրթռան ու իրենց այդ ցաւագին վիճակին հակառակ՝ հպարտութիւնը կուենան այն բաներուն՝ որ ալ չկան :

Չեմ գիտեր ալ ինչը մնացեր է Յրանսային սիրելիք . ոչ պատիւ, ոչ զգացում, ոչ ազնիւ կիրք . ամէն բան ջուրին են տուեր :

Ո՞վ պիտի մոռնայ այն շատ նշանակելի իրողութիւնները, որոնց լոյսովը կարելի է դատել ազգի մը մեծութիւնը :

Ասկէ չորս տարի առաջ ժողովուրդ մը, կը ըզկտուեր վարագ գիշակերի մը ճիրաններուն տակ . անմիջ զոհներուն հոգեվարքի աղաղակները աշխարհը ցնցեցին . հեղղի պէս վաղած արեւներէն երկինքին ամպերը կարմրեցան : Յրանսական ազգը սեւաւ առնք, կարգաց ու լսեց ատոնց ամենէն ճշգրիտ ու ազխարը նկարագրութիւնները, բայց չլուրուեցաւ :

Ասկէ քիչ ետք Յրանսայի նախագահը, Ֆէլիքս Բոն, կարծես Մար-

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ Ի ՅԻՇԱՍԱԿ ԱՐԱՍ ԱՐԱՄԵԱՆԻ

Օգոստոս 9ին կարնոյ մէջ կախաղանի վրայ վերջին շունչը տուող նահատակին յիշատակը պատուելու համար, վաղը, կիրակի առաւօտ, Ս. Պատարագէն վերջ, «Հոգեհանգստեան պաշտօն» պիտի կատարուի, և նոյն ժամանակ մօտէն ծանօթ անձնաւորութիւնը պիտի ընէ նահատակին :

Կը խնդրուի Արդոյ Հայ Հասարակութեանէն, որ իրենց ներկայութեամբ պատուեն սոյն տխուր հանգէսը :

Ուրկէ կը հասկցուի որ Արամ Արամեանի հոգեհանգիստը կը կատարուէր, իբրեւ անվհեր հերոսի մը՝ որ ազգային դատին համար յանձն առած էր արիւնաների գափնիով իր կեանքը պատկել : Պ. յօդուածագիրը, որ պաշտօնին ներկայ գտնուած ըլլալը կը յայտնէ, ինչո՞ւ չէ ուզած լսել պատարագիչ քահանային յիշատակութիւնը՝ ուր կըսէր՝ «... այն ամէն անձնուր» որոնք ի Պօլիս կամ գաւառներէ՝ նահատակուեցան ազգին ու եկեղեցւոյն փառաւորութեան համար . . . և այլն . . .

Այսուհանդերձ տարօրինակ չի թուիր մեզի մասնաւորել Արամ Արամեանի հոգեհանգիստը, քանի որ զայն սարքողները Դաշնակցականներն են և քանի որ Արամ Դաշնակցութեան զբօշին տակ կուսեցաւ միշտ :

Իսկ յօդուածագիր պարոնը, որ վշտացած կերեւայ Չաքրեանի համար մասնաւոր հոգեհանգիստ չի կատարուելուն, ինչո՞ւ անձամբ չի փութար զայն իրականացնել, Դաշնակցականէ մը ա-

ւելի իր պարտքը չէ՞ր ան : Եւ եթէ իր «ուղղութեան համակիրները անհոգ կը մնան իրենց սիրելոյն գագաղին ետեւէն խնկարոյր մաղթանք մը զրկելու, ինչո՞ւ մենք, իր «ուղղութեան հակակիրներէն կը սպասէք զայն», երբ մենք «ի կենդանւոյն» արդէն հաւատք չենք ունեցած անոր վերջին օրերուն հանրային գործունէութեան վրայ : Կուզէիք որ կեղծէի՞նք, և այն «տոն ալ իբր կեղծաւոր ամբաստանէիք մեզի : Չէ՛, պարոննե՛ր, մենք մի՛ սպասէք կեղծաւորութիւն և երեսպաշտութիւն :

Քիչ մը անկեղծ եղէ՛ք, ու մի՛ խմբէք ուրիշ գործերը, երբ դուք իսկ՝ ձեր խծածանքի պահուն՝ ձեր պարտականութեանց մէջ թերացած էք :

Դաշնակցական մը

ՊՈԼԻՍ, 17 Հոկտ.

Վերջին սուրհանդակաւ հայրենիքէն (Տիվրիկ) տուցած նամակնիս տխուր լուրեր հաղորդեցին որ կուգամ հաղորդելու ձեր ընթացողներուն : Տիվրիկ արդէն իր ամբողջ զիւղերով 1895 թուականի սարսափելի կտորածներուն զոհ գնաց . Տիվրիկի Ա. գիւղը ութսուն տունէ բաղկացեալ է, ունի Մոկոց թագաւորանունով եկեղեցի մը . արդէն 95ին ութսուն տունէն վաթսունը այրեցին մոխիր դարձուցին : Եկեղեցին ունի իրեն համար յատուկ կալուածներ և այդ կալուածին մէջ թիւք կը բնակի և տարեկան 16 քիլէ ցորէն կուտար . անա 95ի կտորածներու ժամանակէն ի վեր է որ չէր տար . ո՞վ պիտի ուզէ որ տար . վախերնուն չէին կրնար համարձակիլ ուզել : Ա. գիւղը չորս տարիէ որ ամենայնպէս թշուառութեամբ կապ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԱՅԷՆԷՆ ՄԻՆՉԵԻ ԱՅՍՈՐ

Ի՞նչ կարծիք ունիք Տրէյֆիւսի մասին կը հարցնէին մեզի, շատ անգամ, մոլեռանդ Ֆրանսացիները, խնդրին տաք վայրկեաններուն . ու մենք վախնալով, ճիշդ ինչպէս կը վախնայինք թուրքիոյ մէջ, կը պատասխանէինք :

— Ատիկա մեզի վերաբերող հարց չէ . մենք այդ մասին կարծիք չունինք, այլ փափաք որ արդարութիւնը յաղթանակէ :

— Կը սիրէք Յրանսան .

— Անտարակոյս կը սիրենք մեծ գաղափարներու եւ սկզբունքներու պաշտպան Յրանսան : Ու այդ հարցումն երն ընող միւսմիտ Ֆրանսացիք կուրախանային Յրանսայի մասին գովեստ լսելով մեզի պէս օտարականներու բերնէն : Ատիկա միտքս կը բերէ բարոյապէս և ներթապէս ինկած այն մարդիկը՝

դասպանը շնորհաւորելու ու քաջալերելու նպատակով՝ անոր կատարած գոթիային գործին համար՝ բաժակ կը պարպէր անոր կենացը Բարիլին մէջ : Բուր թերթերը ծանուցին այս իրողութիւնները . ու Ֆրանսական ժողովուրդը չմտածեց անգամ թէ զինք ներկայացնող անձին այդ արարքը իր շարաւոր պատիւը կը թուանորէր ու միանգամայն կը պղծէր մարտիրոս ազգի մը վեհափոստ ստապանքը :

Այսօր ալ Պ. Գօնսթան, Յուսէֆի գործաւորական շարդին տխուր հերոսը, Պօլիս ոճրագործութեան մէջ զինքը դերազանցող վեհապետին առջեւ փորի վրայ է . Յրանսայի մեծութիւնն ու պատիւը արժանաւոր պաշտպաններու ձեռքին մէջ է : Ու այս նուիրապղծումներու պատճառով . որպէս զի ի նպատակ քանի մը Ֆրանսացի դրամատիկներու շնորհումներ ստանայ ճիւղին :

Իսկ Տրէյֆիւսի խնդիրը այն փորձաքարն եղաւ, որ ազգի մը ճշմարիտ արժէքը երեւան կը բերէ . անմիջ մարդ մը, պարզապէս ճարպիկ ու աչքը բաց ըլլալուն համար,

նենգութեամբ կամրաստանեն, ապօրինի կերպով կը զատեն, կը դատապարտեն . 4-5 տարի զուր տեղը չարչրկելէ վերջ ճշմարտութիւնը երեւան կելնէ . զայն դատապարտելու համար շինուած բոլոր թղթերուն կեղծ ու խարդախուած ըլլալը բացէ ի բաց կը յայտնուի . աշխարհ կը հասկնայ, ու կը ճանչնայ հրեային անմեղութիւնը, ո՛ւ Ֆրանսական ժողովուրդը կը պահանջէ որ Տրէյֆիւսը կարուի, գլխատուի . ինչո՞ւ . որովհետեւ հրեայ է ան : Ու ստիկա ընողը ճիշդ այն ազգն է որ դար մը առաջ մարդերու հաւասարութիւնը կաւետարանէր ամէն տեղ : Ստորնութեանց այս պղտիկ զգացումներու տխուր երեւոյթներէն ետք ալ չեմ գիտեր ո՞ւր կը մնայ Յրանսայի մեծութիւնը : Եւրոպայի եւ մասնաւորաբար Յրանսայի վրայ հիացեալ Պարոններ, իմ աչքս մի խոթէք քանի մը Քիլմանսոններ . քանի մը ծաղիկներով զարուս չի դար . ամէն տեղ եւ ամէն ժամանակ միշտ գոյութիւն ունեցած է թուով խիստ աննշան դասակարգ մը՝ որ մաքուր ու ազնիւ գաղափարին գաւակներ ու

անբարոյականը որոշելու կարողութիւնը չունին :

Այս վիճակը դարձանելը ինչպէս ըսինք վերը , շատ գիւրդին է . միայն պէտք է զգալ ու զգացընել բոլոր անոնց որք մնացած են նախապաշարեալ ու գիտութեան վրայ սխալ կարծիքներ ունին :

Օրինակ առնենք ուրիշ ազգերէն . աչքի առաջ ունինք պուրկարները որոնք ամէն միջոց կը գործածեն իրենց դատերը կը թխուր . ի հարկէ մենք չենք կարող անոնց պէս կարգին վարժարաններ ունենալ . բայց խնդիրը հոն չէ . մենք ալ եթէ ուզենք կարող ենք ունենալ գոնէ մեր անմիջական պէտքերուն գոհացում տուող կրթարաններ :

Միեւնոյն ատեն եթէ մենք չունինք այդպիսի վարժարաններ , ինչու ուրեմն մեր ազգիկները չի յաճախեն պետական բարձրագոյն կրթարանները , ուր աւելի գոհացում կրնան ստանալ :

Կրթենք մեր ազգիկները ինչպէս որ պէտք է . այն ատեն պիտի ունենանք ապագային թէ մեզի՝ և թէ հանրութեան օգտակար ազնիւ զաւակներ :

ՄՈՒՐԱՏ-ՍՈՎՐԱՏ

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Պ. Բիէն Քէյար բանաստեղծ և հրատարակագիր , որ «Որոր» մէջ մեր դատը օրուան խնդիրներուն կարգին անցուց , «Գրուշակ» խմբագրութեան կարծիք և ազդու նամակ մը ուղղած է : Նամակը կսկսի —ընկերներ կուզումով—և կը վերջանայ այսպէս .

«Ես ձերիններէն եղայ այն օրէն , երբ Արեւելքի մէջ երկար բնակութեան մը պատահմունքը հանդիսատես ըրաւ ինձի ձեր ժողովրդին նահատականութեանը :

Վստահ եղէք , ընկերներ , որ ապագային ալ պիտի չլծերանամ մարդկային և յիշատիական համեմատութեան կամարաքիտ :

— Պ. Օկիւստ Բէնառ «Իւնիօն» նասիօնալ թերթին մէջ ալ յօդուած մը ունի որ կը վերջացնէ հետեւեալ խօսքերով .

«Ուրախութեամբ իմացանք թէ այն սուրբ մարտը որ մենք հինգ տարիէ ի վեր կը մղէինք Հայաստանի դահիճին դէմ՝ Սուլթանին սեւ հոգին վրդոված է . մենք կը յուսանք , մեր վառ բողձանքն է ատ , մեր համոզումը , որ շատ չանցած յաղթանակը պիտի վաստակինք :

— Վանայ մէջ հացի մեծ պակասութիւն կայ . օխտան 70 բարսոյի բարձրացած է : Եթէ արտակարգ օգնութիւն մը չը հասնի գարունին ժողովուրդը սովամահ պիտի ըլլայ :

—)(—

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Իարիզ , Պ. Գաւիգ և Մելիք Ս. Գաւիգ բէկ . — Կը զարմանանք որ ձեր հրատարակութեան մէջ եւրոպական մամուլի մէջ երեւցած նիւթերը հայերու մասին բոլորովին չեն գտնուիր :

Ձեր տուած լուրերուն հարկերին իննուսունը հինգը բոլորովին անպէտք են հայ լրագրի մը համար :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պօլսէն հոկտ. 15 ին «Թան»ին կը հեռագրեն թէ . այն օրէն ի վեր երբ պալատին մէջ Միտհատ փաշայի աղուն փախչելուն համոզեցան , մեծ յուզում տիրեց , որովհետեւ փախչողը եւրոպայի մէջ պահուած կարեւոր օտարմաններ գտած է որ կը վերաբերին Սուլթան Մուրատի գահակցութեան : Այդ կարեւոր օտարմանները Միտհատ փաշան Անգլիա պահած էր և թուրք բարեօրոգչին հաւատարմ կուսակիցները որոնք Համիտին շրջապատողներ են , տեղեկութիւն տուած են Միտհատի տղուն :

— Տիւնտէ քաղաքի քով գերուած անգլիական զինուորները բերուած են Բրէտօրիտ . երկաթուղիի կայարանը ստուար ամբար խոնուած է եղեր , գերիները գիմաւորելու : Գերիներու հասնելը պատճառ չէ եղած ոչ մի թշնամական ցոյցի : Ամբարը զանոնք ընդունած է խորին և ակնածելի լուսութեամբ մը : Գերիներու գնացքը քաղաքի մէջէն կուտարուեր է խիստ կարգապահութեամբ : Վերաւորները հիւանդանոց զրկուեր են :

Միւսները , սպայ և զինուոր վաշտ մը ձիաւոր պօսէրներով առաջնորդուած են իրենց համար նշանակուած բնակարանները : Սպանները զինուորներու հետ չպիտի բնակին . ասոնց իրաւունք պիտի տրուի հրատարակի վրայ ազատ շրջելու , անոնցմէ պատուաւոր խօսք առնելով որ այդ թոյլտուութիւնը ի շարք չը գործածեն :

— Հոկտեմբերի 15ին Միտհատ նահանգներուն նախագահին դիմում ըրած են խնդրելով որ միջամտէ Անգլո-Պրանսիական խնդրոյն : Նախագահը թուղթը տուող պատգամաւորներուն վստահեցուցած է թէ այդ տօկիմանը իր մեծ ուշադրութեանը նիւթ պիտի ըլլայ :

— Գերմանիոյ կառավարական թերթերը դժգոհութիւն կը յայտնեն անգլիական հեռագրական գրաքննութեան դէմ , որ ոչ միայն կարգիլէ պատերազմի լուրերը ստանալուն , այլև Գերմանիոյ իր Ափրիկեան կայուածներու հետ ունեցած հաղորդակցութեանը , Կըսեն թէ պէտք է նոր հեռագրական թերթ շինել Անգլիոյ ստորացնող հսկումին չենթարկուելու համար :

— Հոկտ. 16ին Վաշինկտընէն «Նիւ-Եօրք» թերթին հետեւեալը կը հեռագրեն .

Ստոյգ աղբիւրներէ առնուած լուրերու նայելով Միտհատ-Նահանգները հետեւեալ գիրքը պիտի բռնեն դէպի Անգլիա և Պրանսիալ :

Միտհատ նահանգները ճիգ չը պիտի թափեն միջամտութիւն առաջ բերելու : Բոլորովին չը պիտի մասնակցին այն նօթերուն որոնք պիտի զրկուին Անգլիոյ խնդրելու յայտարարելու վերջնական տրամագրութիւնները :

Եւրոպական միջամտութիւնը սպառնալիք մը կնդուին բոլոր ազգերու բարեխառնութեանը՝ որը իրարանցում պիտի ձգէ ամբողջ առեւտրական աշխարհի յարաբերութիւններու մէջ : Եւ կը կարծեն որ այդ տեսակ միջամտութիւն մը ազգերը իրար պիտի ընդհարէ , բոլոր ազգայնական խնդիրները պիտի զրգուէ , պիտի ցնցէ իշխանութիւններու հաւատարկութիւնը և մէջ տեղ պիտի նետէ Չինի հարցը , ուր Միտհատ նահանգները կարեւոր շահեր ունին :

— Ռուսական «Նովոստի» լրագիրը կըսէ թէ Անգլիան կրնայ վստահ ըլլալ որ եւրոպական մեծ պետութիւնները բոլորովին չեզոք կը մնան , եթէ Անգլիա Ափրիկէ բացառապէս տիրելու արտակարգ յաւակնութիւնը չունենայ :

«Նովոստի» կը կարծէ որ Պրանսա և Գերմանիա , նոյն իսկ առանց զաշնակցելու , կրնան իրենց ալքերցութիւնը բանեցնել հարաւային Ափրիկէի մէջ երկարատեւ և հաստատուն խաղաղութիւն մը ստեղծելու , որովհետեւ անոնք ամենէն շատ շահ ունին աշխարհի այդ մասին մէջ , միայն Անգլիա չը լինի գերիշխանը :

— Կլէնքօյի մօտ թրանսվալցիները յաղթող ժէնէրալ Սիմօն մեներ է իր առած վէրքերէն :

— Հոկտեմբեր 17ին Լօնտրայի մէջ պաշտօնական «Ուար» թերթը պատերազմի մասին ոչ մի լուր հաղորդած է :

— Անգլիոյ պատերազմական նախարարութիւնը պաշտօնապէս յայտարարած է Նաթալի մէջ սպաննուած և վիրաւորուածներու ցուցակը .

Կլէնքօյի ճակատամարտի մէջ 36 սպաննուած , 199 վիրաւոր . Էլանտուրակտ՝ 51 սպաննուած 210 վիրաւոր .

Թիէլտքօնտէին՝ 12 սպաննուած 103 վիրաւոր .

— Հոկտեմբեր 17ին Լօրտ Ռօզպէրի 829 ձայնով կաղիօ քաղաքին համալսարանի տեսուչ ընտրուած է : Լօրտը ազատամիտ ուսանողներու թեկնածուն էր : Այս ընտրութիւնը համակրական ալմալի ցոյցերու արժանացեր է :

—)(—

ԹԱՏՐՈՆ «ԱՆԿԷԼ ՍԼԱՎՈՅ»

«Վէսէլօ» հայ դերասանական խմբին կողմանէ 23 հոկտ. շաբաթ երեկոյ ժամը 8 1/2 ին պիտի ներկայացնէ՝ ՄՈՒՈՒԹԵԱՆ ՎԱԽՃԱՆԸ գօմէտի տրամ 4 արարուած 2 պատկերով : Եւ ծիծաղաշարժ զուեշտ մը :

Կիրակի երեկոյ՝ ԹՈՒՆԱԼԻՑ ԳՈՒՍԹԸ գօմէտի տրամ 3 արարուած : Բարոյալից կատակախաղ ՄՕՐԴՍ ԿԱՏԱՐԵԱԼ Զէ երկու արարուած :

Թարգմ. Պիտար Առապաճեանի : ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ԱԺԻՆ

Յ. ՃԱՆԿԻԻԼԵԱՆ

ՆՈՐ ԲԱՑՈՒՄԻՆ ԾՆԱՎԱԿԱՆԱՆՈՑ Թիւ 389 Իսկիյի-պաշի

Կը վաճառուի ծրարտա , բոթալի եւ ազերսագրի ամէն տեսակ բուրբ նաեւ «Շարժում»ը :

Շարժումը կը ծախուի նաեւ նամակատան գիմաց նոր քացուած փոքրիկ գրատունը :



Ս. ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ

ԿՕՇԿԱԿԱՐ

Մուսալա , սեղանաւոր Սարգիս Գագրիէշեանի կարգը :

Ճաշակաւոր , տոկուն եւ ձեւաւոր կօշիկ շինել սալուրդը պէտք է դիմէ Պ. Ստեփան Խօրասանճեանի , որուն ճարտարութիւնը մէկ փորձով երեւան կիւլայ :

Գիները խիստ գերամատչելի :

ԸՆԴԱՐՁԱԿ ԵՐԿԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆՈՅ

Հին եւ նոր Այգ. երգերու զին 2 ֆլ. սոյն երգարանը կը ծախուի Վառնա , Ա. Ջարպտանէլեանի գրատունը նաեւ կը գտնուի ամէն տեսակ զարդանկար եւ վրայական գրքեր . դրամի փոխարէն կընդունին նաեւ նամակագրոյմ . Գնում եւ վաճառում ամէն տեսակ գործածուած նամակագրոյմերու :

ՊՕՐՍԱ

Վառնա 22 Հոկտեմբեր

Վաճօն	Լիպրա	Ֆրանք	
ՊՈՒՂՏԱՅ	53—57	9 20—10	
ՄԻՍԻՐ	—	—	Եօզ
ԱՐԲԱ	—	—	»
ԵՈՒՎԱՅ	—	—	»
ՅԱՍՈՒԼԵԱ	—	—	»
ՏԱՐԸ	—	—	»

Առապա	Լիպրա	Ֆրանք
ՊՈՒՂՏԱՅ	55—60	9 50—11
ԱՐԲԱ	38—44	6.50—7.40
ԵՈՒՎԱՅ	35—36	5.20—5.30
ՄԻՍԻՐ	55—57	6—7
ՏԱՐԸ	55—58	5.50—6.00
ՅԱՍՈՒԼԵԱ	100 փր	12—20

Հէր կիւն կէլէն մալ	
ՊՈՒՂՏԱՅ	150—200 առապա
ԱՐԲԱ	25—30 »
ԵՈՒՎԱՅ	5—10 »
ՅԱՍՈՒԼԵԱ	15—20 »
ՄԻՍԻՐ	10—15 »
ՏԱՐԸ	8—10 »

Առապա մուամէլէսի նարթէն 21.20 ֆրանք հիսապը իլէ տիր .